ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1486 10.11.2014թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ № 4544
12 11 14

Հարգելի պարոն Գասպարյան.

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբերի 25-ին թիվ 2621/1465 գրությամբ դիմել էր Ձեզ ՁՊՎ-ում պահվող անձանց 3 անգամյա սնունդ չտրամադրելու հիմնախնդրի վերաբերյալ:

Ի պատասխան մեր գրությանը 23.10.2014թ-ին թիվ 2/2-1-2681 գրությամբ տրվել էր մեկնաբանություն, որի որոշ կետեր Դիտորդական խմբի համար անընդունելի է:

1. Մեկնաբանության 2-րդ կետ.

Մեջբերում ենք <<Դիտորդական խմբի այցելության օրը ՁՊՎ-ում պահվող երկու անձանց՝ Ա.Դավթյանին և Մ. Եսայանին տրվել է տաք ճաշ (շիլա) : Տարաձայնությունների պատճառը եղել է այն, որ դիտորդների խմբի անդամների հարցերին պատասխանելու ժամանակ ձերբակալված Ա. Դավթյանը սկզբում լրջություն չի ցուցաբերել և դիտորդներին հայտնել է, որ տապակած կարտոֆիլ ու թեյ են տրամադրել իրեն, սակայն հետո նույն հարցին տվել է իրականությանը համապատասխանող պատասխաններ>>: Դիտորդական խմբի համար անընդունելի և անհասկանալի է

- Ի՞նչ է նշանակում Ա. Դավթյանը սկզբում լրջություն չի ցուցաբերել և Դիտորդական խմբին հայտնել է, որ տապակած կարտոֆիլ ու թեյ են տրամադրել իրեն
- Ի՞նչով է հիմնավորվում որ հաջորդիվ ձերբակալվածը տվել է իրականությանը համապատասխանող պատասխան:

2. Մեկնաբանության 3-րդ կետ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ № 8680
11 11 14

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

կառավարության 05.06.2008թ-ի թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի որևէ կետով սահմանված չէ ՁՊՎ-ում սննդի տաքացուցիչի առկայությունը, սակայն բաժինների հերթապահ մասում առկա են տաքացուցիչներ և հարկ եղած դեպքում սնունդը տաքացվում է:

Դիտորդական խումբը ներկայացվածի հետ համաձայն չէ, որովհետև

- ՀՀ կառավարության 05.06.2008թ-ի թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 183-րդ կետում ասվում է << ՁՊՎ-ում ամեն օր անցկացվում է մենախցերի և այլ սենյակների խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանող միջոցներ, իսկ **սննդի տաքացման սենյակում**՝ սննդի յուրաքանչյուր բաժանումից հետո>>
- ՀՀ կառավարության 05.06.2008թ-ի թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի Ձև 13-ը ՁՊՎ-ի տեխնիկական անձնագիրն է, որի 2-րդ կետի 4-րդ տողում նույնպես նշված է **սննդի տաքացման սենյակների թիվը**:

Այսպիսով՝ եթե ՁՊՎ-ն պետք է ունենա սննդի տաքացման սենյակ, ապա այն պետք է ունենա նաև սնունդ տաքացնելու համար տաքացուցիչ՝ անվանը համապատասխան:

Խնդրում ենք կրկին անգամ ուսումնասիրել ներկայացվածը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-3137 «28» 11 2014թ.

Ձեր 10.11.2014թ. թիվ 2621/1486 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի 25.09.2014թ. թիվ 2621/1465 գրությանը ՀՀ ոստիկանության կողմից 23.10.2014թ. թիվ 2/2-1-2681 գրությամբ տրամադրված մեկնաբանություններին տրվում են հետևյալ պարզաբանումները.

- Ոստիկանության Սևանի բաժնի ՁՊՎ-ում պահվող Ա.Դավթյանը դիտորդների խմբի հարցին, պատասխանել է, որ իրեն այդ օրը տրամադրվել է տապակած կարտոֆիլ ու թեյ, ինչն իրականությանը չի համապատասխանել և ոստիկանության կողմից որակավորվել է որպես անլրջություն: Հնարավոր է, որ դիտորդների խմբի հետ առանձնազրույցի ժամանակ ձերբակալվածը նշեր իր մտքով անցած որևէ այլ կերակրատեսակի անվանում, որը տրամադրվող անվճար սննդակարգում ընդհանրապես ընդգրկված չէ: ՁՊՎ-ում երբեմն հանդիպում են նման վարքագծի տեր անձինք և ՁՊՎ վարչակազմը միշտ էլ տվյալ պարագայում ըմբռնումով է մոտենում հարցին:
- Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվել է, որ իրականում 18.09.2014թ. ՁՊՎ-ում պահվող անձանց տրամադրվել է տաք ճաշ (շիլա), որի մասին էլ հայտնել է նշված օրվա ՁՊՎ-ի հերթապահ ոստիկանը:
- Ձեր գրությունում նշված երկրորդ հարցին ՀՀ ոստիկանության շտաբի 23.10.2014թ. թիվ 2/2-1-2681 գրությամբ Ձեզ արդեն իսկ տրվել է սպառիչ պատասխան:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ ոստիկանությունը 2015թ. հանդես է գալու ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախաձեռնությամբ, քանի որ նշված իրավական ակտով սահմանված են որոշակի դրույթներ, որոնք տարաբնույթ մեկնաբանությունների առիթ են տալիս և ենթակա են հստակեցման:

ՀՀ ոստիկանության շտաբ